



ԿԱՆԳՆԵՔ | ՄՏԱԾԵՔ | ՄԻԱՑԵՔ™

Խորհուրդներ մանուկներին, դեռահասներին և պատանիներին համացանցային խաղերի հարցում

Համացանցային խաղերը զվարճալի են և ինտերակտիվ: Կարող եք խաղալ ընկերների և աշխարհի տարբեր ծայրերում գտնվող անձանց հետ: Համոզվեք, որ համացանցային խաղեր խաղալիս պաշտպանված եք դուք և ձեր անձնական բնույթի տեղեկությունները: Ստորև ներկայացված պարզ ուղենիշներին հետևելը կարող է կանխել հետագա բարդությունները: Առաջին քայլով **ԿԱՆԳՆԵՔ**, **ՄՏԱԾԵՔ**, **ՄԻԱՑԵՔ**:

Խաղը ձերն է, եղեք խաղի տերը

- Եթե այլ խաղացող ձեզ անհանգստություն է պատճառում, այդ մասին պատմեք վստահելի չափահասի: Հիշե՛ք, որ միշտ կարող եք խաղից հանել ձեզ անհանգստություն պատճառող խաղացողին:
- Սովորեք ինչպես արգելափակել և/կամ հաղորդել այլ խաղացողի մասին, եթե նա ձեզ անհանգստություն է պատճառում: Գրանցեք, թե մյուս խաղացողն ինչ է ասում, սակայն ինքներդ մի՛ սադրեք նրան:
- Խաղում եք այնպիսի մարդկանց հետ, որոնց չեք ճանաչում կամ որոնք ձեր ընկերները չեն, ապա ժամանակն է քողարկվել:

o Ընտրեք անվտանգ խաղանուն, օրինակ է SecretNinja99 կամ LeTigreVerde:

o Օգտագործեք ավատար համացանցային տեսախցիկի փոխարեն: Տեսախցիկը շատ լավ բան է, բայց կարիք չկա, որպեսզի անձանոթներն իմանան, թե ինչ արտաքին ունեք: Հանդես եկեք խորհրդավորության շղարշի ներքո:

o Օգտվեք ձայնային ազդանշանների համակարգից, եթե ունեք այդպիսին: Հակառակ դեպքում խուսափե՛ք ձայնով զրույցներից պաշտպանելու ձեր անանունությունը:

Մաքուր պահեք ձեր համակարգչային տեխնիկան

Զրուցեք ձեր ծնողների կամ խնամակալների հետ այն մասին, թե ինչպես պաշտպանել ձեր համակարգիչը համակարգչային վիրուսներից, լրտեսական ծրագրերից կամ այլ վնասական ծրագրերից:

- **Արդիականացրեք անվտանգության ծրագրաշարը.** Վիրուսներից, վնասակար ծրագրերից և այլ առցանց սպառնալիքներից լավագույն պաշտպանությունը անվտանգության ծրագրաշարը, ցանցային գննարկիչը և օպերացիոն համակարգն արդիականացնելն է:
- **Պաշտպանեք բոլոր այն սարքերը, որոնք միանում են Համացանցին.** Համակարգիչներից բացի վիրուսներից և վնասակար ծրագրերից պաշտպանության կարիք ունեն նաև սմարթֆոնները, խաղային համակարգերը և ցանցին միացող այլ սարքերը:

Պաշտպանեք անձնական բնույթի տեղեկությունները

Անձնական տեղեկությունները բոլոր այն տեղեկություններն են, որոնց միջոցով հնարավոր է բացահայտել ձեր ինքնությունը կամ ձեր հասցեները: Օրինակների թվում են ձեր անունը, հասցեն, հեռախոսահամարը, օգտատիրոջ անունը և գաղտնաբառը, լուսանկարները, ծննդյան ամսաթիվը և սոցիալական քարտի համարը:

- **Պաշտպանեք ձեր հասցեները.** Հայցեք պաշտպանություն, որն ավելի ուժեղ է, քան գաղտնաբառերը: Հասցեների շատ տրամադրողներ այժմ առաջարկում են ինքնության ստուգման լրացուցիչ ուղիներ նախքան տվյալ կայքում որևէ գործունեություն ծավալելը:
- **Ընտրեք երկար և ուժեղ գաղտնաբառեր.** Օգտվեք մեծատառերի և փոքրատառերի, ինչպես նաև թվերի և խորհրդանիշերի համադրությունից՝ ստեղծելու ավելի անվտանգ գաղտնաբառեր: (Հիշե՛ք, որ գաղտնաբառերը ձեր հասցե մուտք գործելու բանալին են: Միակ մարդիկ, որ պետք է իմանան դրանք, դուք եք և ձեր ծնողները, այլ ոչ՝ ձեր եղբայրները, քույրերը, լավագույն ընկերները կամ ուսուցիչը: Միայն դուք:)
- **Ձեր առցանց կյանքը պատկանում է ձեզ:** Կայքերում գաղտնիության և անվտանգության կարգավորումները արեք այնպես, որ տեղեկություններ փոխանակելու տեսանկյունից դրանք հարմար լինեն ձեզ: Ճիշտ է սահմանափակելը, թե ում հետ և ինչպես եք տեղեկություններ փոխանակում:

Համացանցի հարցում եղեք գիտակ

Տեղյակ եղեք Համացանցի վերջին զարգացումներին, իմացեք, թե ինչպես վարվել, եթե ինչ-որ բան այնպես չէ և բաց եղեք ձեր ծնողների հետ այն հարցում, թե ինչ էք անում առցանց:

- **Թարմացրեք ձեր գիտելիքները: Ուսումնասիրեք համացանցային անվտանգության նոր ուղիները:** Ամենավերջին տեղեկություններին ծանոթացեք վստահելի կայքերից և կիսեք դրանք ընկերների, ընտանիքի անդամների և գործընկերների հետ՝ խրախուսելով նրանց լինել գիտակ համացանցի հարցում:
- **Գործելուց առաջ մտածեք.** Զգուշացեք այնպիսի հաղորդագրություններից, որոնք ձեզ կոչ են անում գործելու անմիջապես, առաջարկում են բաներ, որոնք չափազանց լավն են այդպիսիք լինելու համարկամ հայցում են անձնական բնույթի տեղեկություններ: Անձանոթներից ոչինչ մի ներբեռնեք: Դրանք կարող են լինել կեղծ ծրագրեր, որոնք իբրև թե ձեզ հնարավորություն կտան ավելի լավ խաղալ, սակայն իրականում հնարավոր է, որ լինեն վնասակար ծրագրեր:

Եղեք ավելի լավ համացանցային քաղաքացի

Շատ հեշտ է համակարգչի դիմացը նստած ասել բաներ, որոնք երբևէ դեմ առ դեմ չէիք ասի: Առցանց եղեք նույնքան հարգալից, որքան կլինեիք իրական կյանքում:

- **Ինչն առավել անվտանգ է ինձ համար, անվտանգ է նաև այլոց համար.** Այն, ինչ անում եք առցանց, կարող է ազդել շատերի վրա տանը, աշխատավայրում և ողջ աշխարհում: Ճիշտ առցանց սովորություններ ունենալուց շահում է համաշխարհային թվային հանրությունը:

ԿԱՆԳՆԵ՛Ք. Նախքան Համացանցից օգտվելը ժամանակ հատկացրեք ուսումնասիրելու ռիսկերը և սովորելու, թե ինչպես բացահայտել հավանական խնդիրները:

ՄՏԱԾԵ՛Ք. Մի պահ ժամանակ հատկացրեք համոզվելու, որ ճանապարհը հարթ է: Աչալուրջ եղեք նախազգուշացումների հարցում և մտածեք, թե ինչպես կարող են ձեր առցանց գործողություններն ազդել ձեր և ձեր ընտանիքի անվտանգության վրա:

ՄԻԱՅԵ՛Ք. Վայելեք Համացանցն ավելի մեծ վստահությամբ՝ համոզված, որ ձեռնարկել եք ճիշտ քայլեր ապահովագրելու ձեզ և ձեր համակարգիչը: